Հայաստանի հանրապետության
Կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 204 Ա
13/08/2010

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը և 54-րդ հոդվածի 11-րդ մասը և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կանոնադրության 74-րդ կետը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ու մ է .**

1. Սահմանել, որ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունը խորհրդի նիստերին իր խորհրդի անդամների մասնակցության համար տրամադրում է փոխհատուցում՝ յուրաքանչյուր նիստի համար 10000 Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:
2. Սահմանել, որ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունը սույն որոշման 1-ին կետով նախատեսված փոխհատուցումը խորհրդի անդամներին վճարում է կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ խորհրդի համապատասխան նիստին հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության**
**կենտրոնական բանկի նախագահի տեղակալ** **Վաչե Գաբրիելյան**

2010 թ. օգոստոս 13 ք. Երևան